Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 10-06-2021 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 40 -
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00137
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-06-24
1.5 ՀՎՀՀ-ն		01511187
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91438047
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		aua.am
1.8 Էլեկտրոնային փոստը		mmkrtchi@aua.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Հայաստանի ամերիկյան համալսարան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարին Մարկիդես		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	424	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրում	86117500
	Միքաել Նալբանդյանի գրական ժառանգությունը (էլեկտրոնային տարբերակ)	6356280
	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն - Ալիշան	6792000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հանքաարդյունաբերության ոլորտումթափանցիկության և հաշվետվության բարելավում	6466404

	էկոհամակարգերի ծառայությունների բարելավում	9194274
	Կոպերնիկուս համակարգի միջոցով սնծովյան ավզանում իրականացվող մոնիտորինգ	47006388
	Մեթանոգենեզիս	4012182
	ՀՀում առողջապահության ոլորտի կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորում	16635807
	Հանքարդյունաբերական թափոնների խելամիտ կլիմայական մոտեցմամբ կրկնօգտագործումը և էկոհամակարգերի վերականգնումը	5633382
	Էմորի Համալսարան	2890462
	ՀՀ սպառողների վստահության գնահատում	15000000
	Ֆինանսական ներառում դասընթացի մշակում	12211377
	Քաղաքականություն, փորձաքննություն և վստահություն գործողության մեջ	43928060
	Էրասմուս Բուստ	6580098
	COVID -19-ի և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների գործունեությունը վերահսկելու աջակցություն	24809843
	Հանքարդյունաբերության քաղաքականության երկխոսություն, հանքարդյունաբերության տվյալների պորտալ և երիտասարդության ներգրավվածություն	10114650
	Նորարական հանգույցի ծրագիր Հայաստանում	2424398
	Սկսնակ մենթորների համապատասխան ցանց	2675573
	Գիտական հետազոտություն ինտերակտիվ սեգմենտացիայի և մաթինգի տեխնիկական միջոցների վերաբերյալ	11658465
	Այլ կազմակերպություններ	1098921130
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Անհատներ	24273968
	Ուսանողներից և դասընթացների մասնակիցներից	2503300772
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	982547737	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	Սեղաններ	10445948
	համակարգչային տեխնիկա	1890062
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		

10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Բարձրագույն և հետբուհական կրթություն և դասընթ ացներ	2754560112	
Գիտահետազոտական ծրագրեր	274011515	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	5016774564	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	3028571627	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 7 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by KHEROLYANTS VARDUHI
7511690173
Date: 2021.08.26 00:09:03 AMT

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Ամերիկյան Համալսարան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք

Grant Thornton

եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«GRANT THORNTON» CLOSED JOINT STOCK COMPANY
00040569

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

1 հունիսի 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	973,919	1,084,884
Ոչ նյութական ակտիվներ	5	8,649	17,335
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	39,772	66,243
		1,022,340	1,168,462
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	39,790	41,190
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	352,061	289,043
Ժամկետային ավանդներ	8	27,755	25,203
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	660,876	662,171
		1,080,482	1,017,607
Ընդամենը ակտիվներ		2,102,822	2,186,069
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	557,344	628,719
Վարձակալության գծով պարտավորություն	11	58,426	83,315
		615,770	712,034
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	12	623,835	726,485
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	331,336	330,657
Վարձակալության գծով պարտավորությունների ընթացիկ մաս	11	28,144	25,614
		983,315	1,082,756
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		503,737	391,279
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		2,102,822	2,186,069

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 1-ին:

Կարին Մարկիդես
Նախագահ

Մնացական Մկրտչյան
Ֆինանսական ծառայությունների գծով տնօրեն

"АУА" ФОНД
"AUA FUND"
1511187

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ կրթական ծառայություններից	14	3,168,714	2,999,599
Եկամուտ շնորհներից և նվիրատվություններից		1,267,442	1,594,229
Եկամուտ վարձակալությունից		461,422	536,460
Այլ եկամուտ		10,669	29,295
		4,908,247	5,159,583
Ուսումնական ծախսեր	15	(3,303,899)	(3,446,398)
Վարչական և ընդհանուր ծախսեր	16	(1,175,229)	(1,293,573)
Այլ ծախսեր	17	(343,389)	(210,725)
Գործառնական գործունեությունից արդյունք		85,730	208,887
Ֆինանսական եկամուտ	18	4,604	9,722
Ֆինանսական ծախսեր	18	(10,695)	(12,370)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ, զուտ	19	32,819	4,190
Շահույթ մինչև հարկերը		112,458	210,429
Շահութահարկի գծով ծախս	20	-	-
Տարվա շահույթ		112,458	210,429
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		112,458	210,429
Զուտ ակտիվները տարվա սկզբին		391,279	180,850
Զուտ ակտիվները տարվա վերջին		503,737	391,279

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	112,458	210,429
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	229,802	254,114
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	2,303	(6,510)
Ֆինանսական եկամուտ	(4,604)	(9,722)
Ֆինանսական ծախս	10,695	12,370
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(32,819)	(4,190)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	317,835	456,491
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(34,095)	126,510
Պաշարների փոփոխություն	1,400	(2,199)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	647	(8,450)
Ակտիվներին վերաբերող շնորհների փոփոխություն	(71,368)	(97,514)
Հետաձգված եկամտի փոփոխություն	(117,499)	101,941
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	96,920	576,779
Վճարված տոկոսներ	(10,695)	(12,370)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	86,225	564,409

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(112,618)	(145,008)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	164	6,721
Բանկային ավանդների մարում	(1,622)	(17,999)
Ավանդներից տոկոսային եկամուտ	2,162	572
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(111,914)	(155,714)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների վճարում	(22,359)	(16,924)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(22,359)	(16,924)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(48,048)	391,771
Օգտագործելու սահմանափակ իրավունքով դրամական միջոցներ	-	(7,296)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	46,753	(2,149)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	633,642	251,316
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	632,347	633,642

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.08.2021 00:08